

ՎԱՐԿԱԾ ՎԱՀԱԳՆԻ ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԻ
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

ՎԱՉԱԳԱՆ ԱՎԱԳՅԱՆ

Հայկական առասպելաբանությունը հայոց նախաքրիստոնեական մեծ աստվածներից մեկին՝ քաջության և ռազմի աստված Վահագնին իր դիցաբանական բնութագրով համադրել է թե՛ ամպրոպի և թե՛ արևի աստծու հետ, սակայն տիեզերական տարերքների և վիշապամարտի հետ ունեցած առնչությունների շնորհիվ նա առավելապես գիտակցվել է որպես ամպրոպի աստված և հնդեվրոպական համատեքստում մասնավորապես նույնացվել Ինդրային ու Հերակլեսին:

Հոդվածում առաջին անգամ շրջանառության մեջ դնելով և բանագիտական քննության առնելով X դարի պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցու Պատմության մեջ Վահագնին վերագրված *քնարահարության* մոտիվը՝ ցույց է տրվում, որ դիցաբանական համատեքստում արևի աստված քնարահար Ապոլլոնի կերպարին որոշ առումներով համադրելի Վահագնը նրան մոտենում է ևս մեկ հատկանիշով: Հաշվի առնելով Ապոլլոնի և Վահագնի քնարահարության մոտիվների նմանությունը՝ առաջ է մղվում հնարավոր այն վարկածը, որ Վահագնի առասպելի հնագույն տարբերակում նա ևս եղել է քնարահար, քնարահարությամբ կովել վիշապների դեմ ու հաղթել:

Բանալի բառեր – Վահագն, Ապոլլոն, Հովհաննես Դրասխանակերտցի, քնարահարություն, աստված, առասպել, վիշապամարտ, նմանություն, մոտիվ, վերապրուկ, վարկած

Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ Տրդատ արքայի՝ իր իշխանության մեծամեծներին, իշխաններին, նախարարներին, գործակալներին և այլ մարդկանց ուղղված հրովարտակի ողջույնի խոսքում Վահագնի մասին ասվում է. «...և քաջութիւն հասցէ ձեզ ի քաջէն Վահագնէ ամենայն Հայոց աշխարհիս...» («քաջություն ամենայն Հայոց աշխարհիս՝ քաջն Վահագնից»): Ուրեմն, այստեղ քաջություն շնորհող Վահագնի մակդիրն է քաջը: «...Նա է երկրային քաջերի դիցաբանական անձնավորումը և առաջնորդը»², - գրում է Ա. Պետրոսյանը:

¹ **Ագաթանգեղոս**, Հայոց պատմություն (քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի: Աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Ա. Ն. Տեր-Ղևոնդյանի), Եր., 1983, էջ 80, 81:

² **Ա. Պետրոսյան**, Հայկական վիշապամարտի երկու հակադիր կերպարներ, «Պատմաբանասիրական հանդես», Եր., 2010, № 1, էջ 189:

Ագաթանգեղոսի Պատմության մեջ՝ մեկ այլ տեղում, Վահագնը առնում է ևս մեկ մակդիր՝ «Վիշապաքաղ»։ «Եւ իբրև եհաս ի սահմանս Հայոց՝ լուաւ Գրիգորիոս, թէ Վահեվանեան մեհեանն մնացեալ է յերկրին Տարօնոյ, մեհեանն մեծագանձ, լի ոսկով և արծաթով, և բազում նուէրք մեծամեծ թագաւորացն ձօնեալ անդ. ութերորդ պաշտօն հոչակաւոր, անուանեալն *Վիշապաքաղն* Վահագնի, յաշտից տեղիք թագաւորացն Հայոց Մեծաց, ի սնարս լերինն Քարքեայ, ի վերայ գետոյն Եփրատայ, որ հանդէպ հայի մեծի լերինն Տարոսի, որ և անուանեալ ըստ յաճախաշատ պաշտաման տեղեացն՝ Յաշտիշատ» («Երբ եկավ հասավ Հայաստանի սահմանները, Գրիգորը լսեց, թէ Վահեվանյան մեհյանը մնացել է Տարոնի երկրում՝ մեծագանձ մեհյանը լի ոսկով ու արծաթով և մեծամեծ թագավորների ձոնած բազում նվերներով: Պաշտամունքի ութերորդ հոչակավոր [վայրն] էր *Վիշապաքաղն* Վահագնի անվամբ, Մեծ Հայքի թագավորների գոհերի տեղը, Քարքե լեռան լանջին, Եփրատ գետի վրա, Տավրոս մեծ լեռան դիմացը, որը և պաշտամունքի վայրերի հաճախաշատ լինելու պատճառով անվանված էր Աշտիշատ»)՝³ (ընդգծումը մերն է - Վ. Ա.):

Ճիշտ է, Խորենացու Պատմության մեջ Վահագնին որևէ մակդիր-հատկանիշ ուղիղ չի վերագրվում, սակայն նրա ծննդյան փոքրիկ չափածո ներբողը մեջբերելուց հետո Պատմահայրը վկայում է. «Ձայս երգելով ոմանց փանդոամբ, լուաք մերովք իսկ ականջօք: Յետ որոյ և ընդ վիշապաց ասէին յերգին կռուել նմա և յաղթել, և կարի իմն նմանագոյնս զՀերակլեայ նահատականութիւնսն նմա երգէին» («Մենք մեր ականջով լսեցինք, ինչպես այս ոմանք երգում էին փանդիոներով: Դրանից հետո երգում էին, թե կռվել է վիշապների հետ ու հաղթել, և Հերակլեսի քաջագործություններին շատ նման բաներ էին երգում նրա մասին»)՝⁴:

Վահագնին տրված մի մակդիր-անվանում էլ, ինչպես գիտենք, պահպանվել է մի հին լեգենդում, որ գրի է առել Անանիա Շիրակացին. «Ոմանք յառաջնոցն հայոց ասացին, թէ ի խիստ ձմերայնի, Վահագն նախնին հայոց գողացաւ զյարդն Բարշամայ ասորւոց նախնոյն, գոր և մեք սովորեցաք բնախօսութեամբ *Յարդգողի* հետ անուանել»⁵ (ընդգծումը մերն է - Վ. Ա.):

Ժամանակագրորեն հաջորդ հայ հեղինակը, որ գրում է Վահագնի մասին, Հովհաննես Դրասխանակերտցին է: Իր Պատմության առաջին

³ Ագաթանգեղոս, էջ 452, 453:

⁴ Սովսես Խորենացի, Հայոց պատմություն (քննական բնագիրը Մ. Արեղյանի և Ս. Հարությունյանի: Աշխարհաբար թարգմ. և մեկնաբան. Ստ. Մալխասյանի), Եր., 1981, էջ 102, 103:

⁵ Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար (աշխատությամբ Ա. Աբրահամյանի), Եր., 1940, էջ 30: Նույնը արտատպված տե՛ս Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Եր., 1969, էջ 7:

հատվածում՝ «հին մասում»⁶, նա Վահագնին, ինչպես Խորենացին, նախ ճանաչել է տալիս որպես Տիգրան Երվանդյանի երեք որդիներից վերջինը, իսկ հետո միանգամայն անսպասելի մի գործառույթ-հատկանիշ վերագրում նրան. «Տիգրան ծնեալ որդի զԲաբ, զՏիրան, զՎահագն, զոր ՚ի *կանտոցահար* աղբախս ընդ վիշապաց համբաւէին կռուիլ նմա և յաղթել, ընդ քաջին Հերակլեայ նահատակութեանցն զնա համեմատել»⁷ (ընդգծումը մերն է - Վ. Ա.):

Հետագա շարադրանքում Դրասխանակերտցին Վահագնի կապակցությամբ գրեթե նույնությամբ կրկնում է այն, ինչ կա Մ. Խորենացու Պատմության մեջ⁸:

Վաղուց է նկատվել, որ Հ. Դրասխանակերտցին հաճախ է նմանել նախորդների լեզվին, ոճին, գործածել նրանց դարձվածները, մտածողության ձևերը, պատկերները և այլն⁹. «Դրասխանակերտցու ինքնուրույն շարադրանքում,- ինչպես գրում է Մ. Խորենացու և կաթողիկոս պատմիչի Պատմությունների համադիր քննության հեղինակ, հայագետ-պատմաբան Աշոտ Սարգսյանը,- հաճախ կարելի է հանդիպել Աստվածաշնչից, Եղիշեից, Ագաթանգեղոսից և հատկապես Խորենացուց մանր ու մեծ արտահայտությունների, բնութագրումների, նույնիսկ ընդարձակ նկարագրությունների՝ իր խոսքի մեջ հարմար տեղում ազուցված, ինչը և համարվել է պատմիչի «քերթողական արվեստի» հիմնական դրսևորումը»¹⁰:

Մ. Խորենացու և Հ. Դրասխանակերտցու բնագրերի՝ Վահագնի վերաբերյալ հիշյալ հատվածների համադրության մեջ աչքի ընկնող առաջին տարբերությունը այն է, որ Դրասխանակերտցու կողմից առասպելական հերոսին տրվել է մի անսպասելի ու հետաքրքիր գործողություն՝ *կանտոցահարությունը*, իսկ հաջորդը՝ այն, որ եթե Քերթողահայրը հատուկ շեշտում է, թե ինքը Վահագնի մասին երգերը լսել է անձամբ՝ «լուսք մերովք իսկ ականջօք», ապա կաթողիկոս պատմիչը անորոշ հղմամբ միայն վկայում է. «Ասի բան զՎահագնէ, թէ ՚ի նահանգին Վրաց ըստ չափ հասակի նորա անդրի կանգնեալ պատուէին զոհիւք»¹¹:

⁶ Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, Եր., 1968, էջ 482:

⁷ **Յովհաննես կաթողիկոս**, Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցոյ Պատմութիւն հայոց ՚ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1853, էջ 15: Նույնը արտատպված տե՛ս Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցոյ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 22: Նույնը խիստ մասնակի տարբերությամբ տե՛ս Պատմութիւն Յովհաննու կաթողիկոսի, Յերուսաղէմ, 1867, էջ 29-30, նաև **Հովհաննես Դրասխանակերտցի**, Հայոց պատմություն (աշխարհաբար թարգմ. և ծանոթ. Գ. Բ. Թոսունյանի), Եր., 1996, էջ 24:

⁸ Համեմատի՛ր **Մովսես Խորենացի**, էջ 102, 103 և **Հովհաննես Դրասխանակերտցի**, Հայոց պատմություն, էջ 24, 25, 26, 27:

⁹ Այդ մասին տե՛ս և, օրինակ, **Յ. Օջական**, Յովհաննես պատմաբան, Թ. դար, «Միոն», Երուսաղէմ, 1929, թիւ 6, էջ 180-181, **Մ. Աբեղյան**, Երկեր, հ. Գ, էջ 485, **Մ. Մկրչյան**, Երկեր, հ. 1, Եր., 1987, էջ 393, **Վ. Սաֆարյան**, Հայ միջնադարյան գրականություն, Եր., 2016, էջ 148-149:

¹⁰ **Ա. Սարգսյան**, Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմությունը» և Մովսես Խորենացին, Եր., 1991, էջ 74:

¹¹ **Հովհաննես Դրասխանակերտցի**, Հայոց պատմություն, էջ 24:

Աշոտ Սարգսյանի այն համոզմունքը, որով նա հակադրվում է գրականագետ Լևոն Միրիջանյանին՝ գտնելով, թե Վահագնի մասին երգերը ժողովրդի մեջ չէին կարող շրջանառվել նաև X դարում, ուրեմն և անմիջաբար հասանելի լինել Դրասխանակերտցուն¹², գտնում ենք խիստ վիճարկելի: Եթե, օրինակ, VII դարում՝ Անանիա Շիրակացու ժամանակ, կարող էր ասվել-պատմվել Վահագնի մասին, ապա ինչու պետք է X դարում ժողովրդի միջավայրից նրա կերպարը դուրս գար: Հօգուտ այս ենթադրության է նաև Մ. Աբեղյանի հետևյալ խոսքը. «Այսպիսի մի ժողովրդական աստուծու (Վահագնի - Վ. Ա.) առասպելներն ու գրույցները բնականաբար պետք է շատ լինեին և երկար ապրեին նույնիսկ քրիստոնեության ժամանակ»¹³:

Իսկ ինչ վերաբերում է Վահագնին տրված *կանտոցահար* գործառույթին, ո՛չ մեզ հայտնի հետագա մատենագիր աղբյուրներում և ո՛չ էլ Վահագնի վերաբերյալ ծանոթ քննական հետազոտություններում նրան նման գործառույթ չի վերագրվում, ու եթե մտածենք, որ մեր «ամպրոպային աստծու»¹⁴ առասպելը մեզանում «դասում է լաւ ուսումնասիրուածների թուին»¹⁵, ապա պետք է ենթադրել, որ «վիշապաքաղ հայ Հերկուլեսին»¹⁶ տրված այս չնկատված հատկանիշը բանասիրության մեջ կա՛մ պարզապէս ուշադրության չի արժանացել, կա՛մ վրիպել է ուսումնասիրողների աչքից:

Միանգամից զանց ենք առնում հնարավոր այն վարկածը, թե այդ գործառույթը կարող էր Դրասխանակերտցու նախաձեռնությամբ հերյուրածո շնորհված լինել Վահագնին: Եվ եթե չափազանց կասկածամիտ չլինենք՝ մտածելու, թե գրչական սխալի պատճառով այստեղ շփոթություն է սպրդել, և Խորենացու խոսքի վերադասավորման կամ տարրնթերցման հետևանքով, առավել ևս նրան սխալ հասկանալու պատճառով «Զայս երգելով ոմանց փանդոմար, լուաք մերովք իսկ ականջօք» նախադասությունը Դրասխանակերտցու մոտ ձևափոխվել է «Տիգրան ծնեալ որդի զԲաբ, զՏիրան, զՎահագն, գոր ՚ի կանտոցահար աղեբախս ընդ վիշապաց համբաւէին կռուիլ նմա և յաղթել...», որտեղ խորենացիական փանդոններով (իմա՝ կանտոց) բառը, իմաստով և քերականորեն փոխվելով և տեղաշարժվելով, որպէս գործողության հատկանիշ վերագրվել է Վահագնին, որ գրեթե անհավանական է, ապա, կարծում ենք, այդ գործառույթի հիշատակումը կարելի է մեկնաբանել միայն առասպելական համատեքստում որպէս հնավանդ առասպելի մի վե-

¹² Տե՛ս **Ա. Սարգսյան**, նշվ. աշխ., էջ 74:

¹³ **Մ. Աբեղյան**, Երկեր, հ. Ա, Եր., 1966, էջ 72:

¹⁴ **Մ. Աբեղյան**, Հայոց հին գրականության պատմություն, Եր., հ. I, 1944, էջ 32:

¹⁵ **Գ. Մադոյեան**, Դրուագներ հայոց պատմութեան և բանասիրութեան, Գիրք Ա., Եր., 2017, էջ 99:

¹⁶ **Շ. Գրիգորյան**, Վահագնյան վիպերգի և նրա շուրջ ծավալված բանավեճերի պատմությունից, «ՀՄՍՒ ԳԱ տեղեկագիր. Հասարակական գիտություններ», Եր., 1963, № 5, էջ 78:

րապրուկ, որ ժողովրդական բանահյուսությունից առել է Հ. Դրասխանակերտցին իբրև Վահագնի վերաբերյալ դիցաբանական հատկանիշ, որ գոյություն է ունեցել հայկական հնագույն պատկերացումներում հայոց նախաքրիստոնեական մեծ աստվածներից մեկի մասին, իսկ հետո մթագնել:

Այժմ հարց է առաջանում, թե ինչ նշանակություն պետք է տալ Հ. Դրասխանակերտցու կողմից Վահագնին տրված այդ գործառնություն, որը ոչ միայն գեղեցիկ է, այլև խորհրդանշական: Ուսումնասիրությունը, ինչպես կտեսնենք ստորև, բացում է մեր եղած իմացությունների համար անակնկալ մի նորություն, որ կարող է հարստացնել մեր պատկերացումները Վահագնի իբրև առասպելաբանական հերոսի վերաբերյալ:

Անշուշտ դժվար է որևէ վերջնական փաստարկով պատճառաբանել այդ անծանոթ գործառնության մուտքը Վահագնի առասպել, քանի որ բանահյուսական պատկերացումները, ինչպես գիտենք, ընդհանրապես միարժեք չեն¹⁷, և մանավանդ որ «Վահագնի հետ կապված առասպելները երկար ուղի են անցել և մի ընդարձակ ցիկլ են կազմել, որը աստիճանաբար հարաբարդվել է»¹⁸:

Կանտոցահար «նորահայտ» խորհրդավոր բառը, որ առաջին անգամ գործածել է Հ. Դրասխանակերտցին¹⁹, հետաքրքիր է վկայված չէ հայ բառարանագրության գլուխգործոց համարվող «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» երկհատորյակում: Այն առաջին անգամ բառարանագրել է Լավրենտի Հովհաննիսյանը՝ տալով հետևյալ բացատրությունը. «**Կանտոցահար**, ա. Կնտնտոցով հարվածող /սվագող/»²⁰, և ուշագրավ է, որ իբրև գլխաբառի բնագրային վկայություն բառարանագիրը քաղվածքաբար մեջ է բերել հենց Հ. Դրասխանակերտցու Պատմության վերոհիշյալ հատվածը:

Իսկ «հայ բանասիրության մերօրյա անխոնջ մշակներից» Գ. Բ. Թոսունյանը, որ «հայկական համաբարբառների կազմության ամենաակտիվ հեղինակներից է»²¹, և ինքն է գրաբարից արևելահայերենի փոխադրել ու հրատարակել Հ. Դրասխանակերտցու «Հայոց պատմությունը» (1996), որը առայժմ միակ աշխարհաբար թարգմանությունն է, իր նախաձեռնությամբ *կանտոցահար* բառին հոմանիշ-համարժեք է գտել *քնարահարություն*-ը, որ, ըստ բացատրական բառարանների, իմաստա-

¹⁷ Տե՛ս **Ա. Պետրոսյան**, Հայկական վիշապամարտի երկու հակադիր կերպարներ, էջ 189:

¹⁸ **Բ. Առաքելյան**, Դիտողություններ Վահագն Վիշապաքաղի մասին, «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 1951, № 2, էջ 78:

¹⁹ Տե՛ս **Ս. Գրիգորյան**, Նորակազմությունները Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմություն Հայոց» երկում, «Հայագիտական հանդես», Եր., 2019, № 2, էջ 28-29:

²⁰ **Լ. Հովհաննիսյան**, Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Եր., 2010, էջ 149:

²¹ **Է. Մկրտչյան**, Գ. Բ. Թոսունյան. Գրաբարի բառարանագրությունը, «Պատմաբանասիրական հանդես», № 2, Եր., 2006, էջ 294:

յին առումով միանգամայն ընդունելի է²². «Տիգրանը ծնում է Բաբին, Տիրանին, Վահագնին: Վերջինիս մասին ասում էին, թե նա *քնարահարություն* է կոչվել վիշապների հետ և հաղթել»²³ (ընդգծումը մերն է - Վ. Ա.):

Իր հիմնական առասպելում, ինչպես գիտենք, Վահագնը կոչվում-հաղթում է վիշապներին²⁴ «քաղելով»²⁵, «վիշապներին ներքևից՝ երկրից երկինք քաշել-հանելու գործողությամբ»²⁶: Նրան տրված «Վիշապաքաղ» մակդիրի՝ «որպես վիշապ հանող, վիշապ վեր քաշող կամ ցածից վերցնելով ժողովող, այլև վիշապ քաղհանող» ըմբռնումները առավել մանրամասն քննվել են Մ. Արեղյանի հղված աշխատության մեջ²⁷, որտեղ, սակայն, որքան էլ համոզիչ փաստարկների հիման վրա, մասնավորապես Վահագնի միջազգային գուգորդների միջնորդությամբ շեշտվում է նրա՝ որպես ամպրոպային հերոս լինելու հանգամանքը, այնուամենայնիվ մեծանուն գիտնականը ինքն էլ միանշանակ չի պնդում Վահագնի առասպելաբանական բնավորության միարժեքությունը («Վահագն ըստ ամենայնի ամպրոպային կամ կայծակի աստված է...») և նրան նվիրված գլուխը ավարտում է հետևյալ եզրահանգամամբ. «Նա իբրև ամպրոպի աստված հելլենիստական ժամանակներում նույնացվել է Հերակլեսի հետ, այլև մերձեցել է Ապոլլոնին, քանի որ վերջինս էլ ամպրոպային հատկություններ ունի: Մեր Վահագնի մեջ ևս տեսել են արեգակն, որովհետև ամպրոպային և արեգակնային երևույթների անձնավորումները, բնության մեջ եղած նմանության պատճառով, շատ ազգերի առասպելների մեջ իրար նման են և նույնիսկ փոխանակում են միմյանց կամ իրար տեղ անցնում»²⁸:

²² *Կնստնոց* բառի համար տե՛ս **Հայր Գ. Աւետիքեան, Հայր Խ. Միրմէլեան, Հայր Մկ. Աւգերեան**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Վենետիկ, 1836, էջ 1106, **Մտ. Մալխասեանց**, Հայերէն բացատրական բառարան, հ. 2, Եր., 1944, էջ 451, **Էդ. Աղայան**, Արդի հայերէնի բացատրական բառարան, հ. 1, Եր., 1976, էջ 743, նաև ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, հ. 3, Եր., 1974, էջ 156, իսկ *քնարահարություն* բառի համար տե՛ս **Հայր Գ. Աւետիքեան, Հայր Խ. Միրմէլեան, Հայր Մկ. Աւգերեան**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Վենետիկ, 1837, էջ 1008, **Մտ. Մալխասեանց**, Հայերէն բացատրական բառարան, հ. 4, Եր., 1945, էջ 578, **Էդ. Աղայան**, Արդի հայերէնի բացատրական բառարան, հ. 2, Եր., 1976, էջ 1571, նաև ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, հ. 4, Եր., 1980, էջ 740:

²³ **Հովհաննես Դրասխանակերտցի**, Հայոց պատմություն (Աշխարհաբար թարգմ. և ծանոթ. Գ. Բ. Թոսունյանի), Եր., 1996, էջ 25: Ի դեպ, Պատմության ռուսերէն թարգմանության այս հատվածը խիստ հեռացված է բնագրից և ավելի մոտ Մ. Խորենացու խնդրո առարկա նկարագրությանը, որ խիստ զարմանալի է. «У Тигра на родились сыновья: Баб, Тиран, Ваагн, борьбу которого с драконами и победу над ними прославляли певцы-лирики, сравнивая его [деяния] с подвигами Геракла». **Иованнес Драсханакертци**, История Армении (Пер. с древнеарм.) вступ. статья и комментарий М. О. Дарбинян-Меликян, Ер., 1986, с. 53.

²⁴ Տե՛ս **Մովսես Խորենացի**, էջ 103:

²⁵ **Ա. Պետրոսյան**, Հայկական վիշապամարտի երկու հակադիր կերպարներ, էջ 189:

²⁶ **Մ. Հարությունյան**, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 84-91:

²⁷ Տե՛ս **Մ. Արեղյան**, Երկեր, հ. Ա, Եր., 1966, էջ 72-93:

²⁸ Նույն տեղում, էջ 93:

Ա. Պետրոսյանը ևս, ամենևին չծխտելով Վահագնին վերագրված ամպրոպային հատկանիշները, գտնում է, որ թեև «վիշապամարտը հիմնականում կենտրոնացած է ամպրոպի աստծու շուրջը, բայց և այնպես այն բնորոշ է նաև այլ աստվածների ու աստվածությունների, որոնք, այդ դեպքում, համադրվում են ամպրոպի աստծու հետ: Վահագնին հաճախ ամպրոպային հատկանիշներ են վերագրում, բայց նա, դատելով եղած նյութից, ունեցել է նաև արևային աստծու հատկանիշներ»²⁹, իսկ արևի աստվածը հաճախ է կոչվում վիշապների դեմ³⁰:

Իսկ որոշ թարգմանական գործերում Վահագնը ուղղակիորեն նույնացվել է Ապոլլոնի և արեգակի հետ³¹: Եվ այն հանգամանքը, որ Ապոլլոնը ևս քնարահար է, իր շատ հատկանիշներից ևս մեկով, ըստ Դրասխանակերտցու հաղորդածի, հայկական Վահագնը առավել է մերձենում նրան: Հունական համատեքստում՝ Ապոլլոնի մասին առասպելում, կարդում ենք. «Լուսաշող պատանի Ապոլլոնը ճախրում է լազուր երկնքում կիթառը ձեռքին... Հպարտ ու ցնծագին՝ ճախրում է Ապոլլոնը երկրից բարձր ու վեր՝ սպառնալով ամենայն չարի, այն ամենին, ինչ խավարի ծնունդ է»³²: Ապոլլոնը սպանում է Պիթոն հրեշին (փոփոխակ՝ վիշապին)³³, և հնչում է Ապոլլոնի հաղթական երգը, և «այդ երգը կրկնեցին աստծո կիթառի ոսկեղեն լարերը»³⁴:

Ինչպես հասկանում ենք, քնարահարության մոտիվը հատուկ է և Ապոլլոնին, ու երկու աստվածների այդ նույն գործառույթի բովանդակային պարզ համեմատությունը առավել հավանական է դարձնում նրանց առնչություններն ու որոշակի կապը: Ճիշտ է, հունական առասպելում պարզ չի գիտակցվում, թե արդյոք Ապոլլոնը քնարահարությամբ է կոչվում և հաղթում հրեշին, սակայն նա կիթառը (իմա՝ քնար)³⁵ ձեռքին է կոչվում խավարի դեմ, ուրեմն և չի կարելի բացառել, որ այդ լարային գործիքը նրա՝ վիշապասպան գործառույթի բաղկացուցիչ մի մասն է և անմիջականորեն կապված է այդ գործողության հետ: Այսպես տրամաբանելով՝ ուրեմն կարելի է ենթադրել, որ իր դիցաբանական բնութագրով Ապոլլոնին շատ հատկանիշներով համադրելի մեր Վահագնը ևս եղել է քնարահար, քնարահարությամբ կոչվել վիշապների կամ հրեշների դեմ, պարզապես հետագայում կա մ առասպելական հի-

²⁹ Ա. Պետրոսյան, Հայկական վիշապամարտի երկու հակադիր կերպարներ, էջ 190:

³⁰ Տե՛ս Ա. Պետրոսյան, Տիգրան Մեծի առասպելաբանական կերպարը, «Պատմաբանասիրական հանդես», Եր., 2008, № 2, էջ 166:

³¹ Տե՛ս հատկապես Գ. Մուրադյան, Օտար անունների արտահայտությունները հունարան թարգմանություններում, «Աշտանակ», Եր., 1995, № 1, էջ 155, 157:

³² Լ. Կուն, Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները, Եր., 1979, էջ 34:

³³ Տե՛ս Մ. Աբելյան, Երկեր, հ. Ա, էջ 144:

³⁴ Լ. Կուն, նշվ. աշխ., էջ 35:

³⁵ Տե՛ս Հայր Գ. Աւետիքեան, Հայր Խ. Միրամէլեան, Հայր Մկ. Աւգերեան, Նոր բառգիրք հայկազգեան լեզուի, հ. 1, էջ 1096, Մտ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հ. 2, էջ 435, Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Եր., 2009, էջ 522:

շողության աստիճանական խավարման, կա՛մ ժողովրդի ռացիոնալ-բանական մտածողության զարգացման պատճառով այդ մոտիվը աստիճանաբար թուլացել է, խամրել, սակայն իսպառ չի մոռացվել և հրաշքով որպես առասպելական մի վերապրուկ՝ հնում գոյություն ունեցածի մնացորդ, հասել է մինչև X դար և բանավոր խոսքից անցել Հ. Դրասխանակերտցուն:

Անշուշտ, չի բացառվում նաև, որ «մշակույթների երկխոսության ու ժառանգորդման» շնորհիվ՝ Ապոլլոնի մասին վերոհիշյալ ավանդույթունը գուցե միայն Խորենացուց հետո բանավոր եղանակով ընդգրկվել է տեղական միջավայրում և բեկվելով հայ ավանդախոսների երևակայության մեջ ու անցնելով նրանց ստեղծագործական հնոցով՝ կապվել Վահագնի անվան հետ: Իսկ ինչո՞ւ հենց Վահագնի, կարծում ենք պարզ է. չէ՞ որ հայկական հնագույն առասպելաբանության և հայոց հին աստվածների մեջ նա է հատկապես իր դիցաբանական բնութագրով առավել համադրելի եղել Ապոլլոնին:

ВАЧАГАН АВАГЯН – Гипотеза о мифологическом образе Ваагна. – Один из великих армянских богов – Ваагн, бог мужества и войны, благодаря своим отношениям с элементами космической стихии и битве с драконами, в основном осознал себя как бог грома, в индоевропейском контексте его отождествляли, в частности, с Индрой и Гераклом, хотя по сведениям Агатангехоса и Мовсеса Хоренаци (оба V век), в армянской мифологии, своей характеристикой он был сопоставим одновременно с громом и солнцем.

В статье впервые вводится в обращение и с фольклористической точки зрения исследуется мотив игры на лире, приписываемый Ваагну в «Истории» историка X века Ованнеса Драсханакертци. Автор указывает, что в мифологическом контексте Ваагн, который в некоторых отношениях сопоставлен с образом бога солнца Аполлона, сходствует с ним еще в одном атрибуте. В силу схожести мотивов игры на лире Аполлона и Ваагна развивается предположение, что в древней версии легенды о Ваагне он, возможно, тоже сражался с драконами, с чудовищами своей игрой на лире. Однако позже, либо в связи с постепенным затуханием мифической памяти, либо с развитием рационального мышления народа этот мотив постепенно ослаб, угас, но не был полностью забыт и, как мифический пережиток, достиг X века и устно был передан историку Ованнесу Драсханакертци. Не исключено также, что в силу «диалога и наследования культур», упомянутая легенда об Аполлоне могла быть устно включена в местную среду лишь после Мовсеса Хоренаци и связана с именем Ваагна.

Ключевые слова: Ваагн, Аполлон, Ованнес Драсханакертци, игра на лире, бог, миф, битва с драконами, сходство, мотив, пережиток, гипотеза

VACHAGAN AVAGYAN – A Hypothesis about Vahagn's Mythological Image. – Relying on Agatangeghos and Movses Khorenatsi (both 5th c.), Vahagn, one of the great pre-Christian deities in Armenian mythology, the deity of war, with his mythological description, was combined with deities of both sun and thunderstorm. Due to its connection with the cosmic elements and the dragon fight, it was mostly perceived as the deity of thunderstorm, who, particularly in the Indo-European context, was identi-

fied with Indra and Heracles.

The current paper, for the first time, circulates and examines from the folk studies the aspects, the motif of the *lira playing* attributed to Vahagn in the “History” of the 10th Century Historian Hovhannes Draskhanakertsi. It is shown that Vahagn, who is in some respects comparable to the image of the lira player Apollo, is similar to him with one more quality. Considering the similarity of the motives of Apollo’s and Vahagn's lira playing, a possible hypothesis is being developed that in the ancient version of Vahagn's legend he was a lira player who fought against dragons or monsters with his lira. Later, either because of the gradual darkening of the mythical memory or due to the development of people’s rational thinking, that motive has gradually weakened, faded but has not completely been forgotten and, as a mythic remnant, reached the 10th century and was passed from people to Hovhannes Draskhanakerttsi. It is not excluded either that, due to the ‘cultural dialogue and heritage’, the aforementioned legend on Apollo, perhaps only after Khorenatsi, was included in the local milieu orally and was associated with Vahagn’s name.

Key words: *Vahagn, Apollo, Hovhannes Draskhanakerttsi, lira playing, deity, myth, dragon fight, similarity, motive, remnant, hypothesis*